


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 ձր.
Վեցամսեայ . . 6 "

ՍՐՏԱՍՆԱՄԱՆ
Երկու բիւ միկ ծառով
Տարեկան . . 14 ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԱ
Տարեկան 2.60 ծառ
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոթացնում տալիս
20 շաբաթի



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ւ Գ Ա Ղ Ա Գ Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Տ Է

Rédaction du journal

„Igravounk“

VARNA (Bulgarie)


Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւ
լեւ տրուիր



ԿԸ ԽՆԴՐՈՒԻ մեր գործակալներէ,
բարեկամներէ ու բաժանորդներէ որ
հաճին զըզեւու, ծախուած լրագիրնե-
րու եւ բաժանագիրնեւրու հաշիւները
փութով զրկել մեզ:

ԼԵՈՒՍԺ ՆԱՅ ԿԻՆԵՐ

Բաղէշի Առաջնորդին Պաշտոյ
Պատրիարքարանի ուղղած վերջին
գրութիւնը՝ լքուած կիներու
նկատմամբ՝ շատ յուզիչ է և տա-
րապայման զգաստացուցիչ թէ՛
պանդուխտ հայուն համար, թէ՛
Պատրիարքարանի համար և թէ՛
արտասահմանի հայ գործիչներու
համար: Առաջնորդը հոն կը նը-
կարագրէ թէ երկար տարիներէ
ի վեր ծաղիկ հասակի մէջ անայր
ու անպաշտպան ձգուած հայ
պանդուխտներու կիները ո՞ր աս-
տիճան նիւթական ու բարոյական
տագնապներ կանցնեն. մերկու-
թենէ ու նոթութենէ վատ, ա-
մէն ժամ ու ամէն վայրկեան
ի՞նչ փորձութիւններ կը սպասեն
այդ գեռատի հայուհիներու պար-
կեշտութիւնը խաթարելու, ըն-
տանեկան անխառն սրբութիւնը
հայկական համեստութիւնը աւ-
րըշտկելու և պղծելու: Թիւրքին,
Գիւլթին, անխիղճ վաշխառուին,
և անառակ կնամուլին բերտ ու
լպիւրջ որդայթներուն գէժ իր
ամուսնական անկողնոյն սրբու-
թիւնը տարիներով անբիժ պա-
հող պանդուխտի կարմրայտն ու
կայտառ կիներ օրին մէկը, թոյլ
մէկ վայրկեանին, իր քայլերը
խարխափող լպիւրջ կնամուլի մը
հմայքներուն յանկարծ անձնա-
տուր կը լլայ:

Անգամ մը պարկեշտութեան
քօլը պատուելէ վերջ, ալ ոչ
խոստովանահայրը, ոչ գիւղին
ծերակոյտը և ոչ առաջնորդարա-
նին յորդորները կարող են այդ
սայթաքումը կասեցնել: Ի՞նչ
փաստ, ի՞նչ խրատ կրնայ հա-
կադուել և համոզել երկար տա-
րիներ իր ամուսնէն ու անոր
օգնութենէն զրկուած և անոր վե-
րադարձէն յուսարեկ երկոտարող

կիներ: Կիկերոնի ճարտասանու-
թիւնը իսկ անգոր պիտի գտնուէր
լքուած հայ կնոջ սա առարկու-
թեան դէմ: «Կամ մամուսինս բե-
րէք և կամ ինձ գիւրուածիւն
տուէք որ անոր քով երթամ.
առանց, անոր ֆիզիքապէս ըստ
ամենայնի զրկուած՝ չէ կարելի
ապրիլ»:

Հայ պանդուխտներէ լքուած
կիներու այս շատ բնական պա-
հանջը ու տրամաբանական ա-
ռարկութիւնը պարտ կը գնեն
Պաշտոյ Պատրիարքի ուսին որ գը-
րական միջոցներ ձեռք առնէ ի-
րեն խնամքին յանձնուած այդ
թշուառներու վիճակը գարմա-
նելու համար: Անոնց ուղածը
մեծ բան մը չէ, ոչ ալ անկարե-
ւի: Այդ խեղճերը կը սեն՝ մերա-
մուսիններուն Հայրենիք, իրենց
տունը, վերադառնալու արգելքը
վերցուցէք, կամ, եթէ այդ ալ
չէք կրնար, մեզ գիւրուածիւն
տուէք որ երթանք մեր այրերուն
գտնուած տեղերը, ուր անոնք
ինչ վիճակի ալ ըլլան վերջապէս
ձեռք ձեռքի տուած կրնանք
միատեղ ապրուիլ: Եւ այս տար-
րական աղատութիւնն է որ Պաշ-
տոյ մեր Պատրիարքարանը ութ
տարիներէ ի վեր չկրցաւ ձեռք
ձգել հակառակ դէպի թուրք կա-
ռավարութիւնը իր ցոյց տուած
այնչափ հաճոյակատարութիւննե-
րուն:

Շատ պարզ ու շատ մեկին այս
պահանջը չը հասկնալ ձեւացնե-
լով, կամ ձգձգելու քաղաքակա-
նութեամբ մը Պատրիարքարանը
հարկ դատեր է Բաղէշի Առաջ-
նորդէն ցուցակ մը ուղել թէ ո՞ւր
կը գտնուին իրենց կիները լքող
այրերը, ո՞րքան ատենէ ի վեր
կը բացակային. որպէսզի այդ
կեղծ կարելի ըլլայ եղբ պա-
հանջուած մանրամասնութիւննե-
րը իմանալ այդ անձնու գտնուած
տեղերու հոգեւոր վարչութիւնէն:

Բաղէշի Առաջնորդին Պատրի-
արքարան ներկայացուած խնդ-
րը որ նիւթականէ շատ բարձր
հայ ընտանեկան բարոյականը
կը ջօշափէ, լուծելու համար
պատրիարքարանի հարկ դատած

մանրակրկիտ քննութեանց կամ
այդ հարց ու փորձին երեք տե-
ղի չկայ: Ինչո՞րոյն լուծումը մի-
այն հոն է որ Ազգային այդ
պաշտօնատուներ հայ պանդուխտ-
ներու վերադարձին եւ անոնց
կիներուն ճամբորդելու արտօնու-
թիւն ստանայ թիւրք կառավա-
րութենէն, ինչպէս ուրիշ թը-
քահպատակ ժողովուրդներ այդ
աղատութիւնը կը վայելեն, եւ
բացառաբար միայն Հայերու
է որ կը զլայուի այն հակա-
պէտքը: Ինչպէս այսօր ապստամ-
բական դրօշ պարզող Մակեդո-
նացիներուն իսկ երթեւեկի հա-
մար այդ աստիճան արգելք չէ
գրուած:

Մենք փորձառարար գիտենք
թէ արտասահման գտնուող գա-
ւառացի պանդուխտներու մէկ
կարեւոր մասը ամեն ջանք թա-
փած է ընտանիքը իր քով բե-
րել տալու, բայց չէ յաջողած
սրբահատեւ կառավարութիւնը ոչ
կը թոյլատրէ դուրս ելնել եւ
ոչ ներս մտնել: Այս մերկ իրո-
ղութեան առջեւ բոլորովին աւե-
լորդ է Պատրիարքարանի հարց
եւ փորձի ելնելը. անոր պէտք
է ազգու գիմուս մ'ընել Դրան
եւ ի հարկին զեպականներուն
միջամտութիւնը խնդրել:

Միեւնոյն ատեն պարզ կը
ծանշանայ արտասահմանի Առաջ-
նորդներուն, Հովիւներուն և
թաղ. խորհուրդներուն վրայ
որ ասոնք ալ պաշտօնական գրու-
թիւններով բուն իրողութիւնը
ներկայացնեն Պատրիարքարան
և ստիպեն որ սա բուն դարմանը
գտնելու հայտինքն հայերու երթե-
ւեկի արգելքը բառնալու միջոցին
գիմէ ազդուօրէն:

Գիտենք նաեւ թէ արտասահ-
մանի այդ ազգային պաշտօնե-
թիւններն ո՞րչափ թոյլ տարե-
րէ կազմուած են (բացառութիւն-
ները յարգելով). հետեւաբար
պարզ մըն ալ կը ծանրանայ
պանդուխտ ազգայիններու վրայ,
այո՛ւ նոյն ինքն իրենց վրայ, որ
իրենք խմբովին գիմեն տեղա-
կան ազգային պաշտօնեթիւնեց
և հարկադրեն զանոնք գիմել Պատ-
րիարքարան կամ ուր որ անկ է:

Առանց այս անհրաժեշտ պա-
հանջին գոհացումը գտնելու, հա-
զարաւոր պանդուխտ ազգայիններ
այսօր կամ վաղը, օր մը չէ օր
մը գեղազուութիւնը պիտի ու-
նենան հետզհետէ լսելու իրենց
սիրասուն ամուսիններուն ապօրէն
կենակցութիւնները, ընտանիքին
քայքայումը, բարոյապէս փճա-
ցումը: Դառն է ըսել, և այս
ազգովին...

ՆԱՄԱԿ ՊՈՒՍԷՆ

ՊՈՒՍԷՆ, 6 Նոյեմբ.

Ահա Մակեդոնիոյ նահանգաց
ընդհանուր քննիչ Հիւսէին Հիւմի
փաշայի հեռագրական տեղեկա-
գրին ճշգրիտ համառօտութիւնը,
որ կը վերաբերի Աւստրօ-Ռուս
ծրագրին Դրան տուած առաջին
պատասխանին գործողութեանը:
«Ռուսիայի նահանգներուն բո-
լոր գլխաւոր տեղերուն մէջ
գայմագամներ կարգուած են,
190 Գրիստոնեայ ոստիկաններ
կարգուած են Մանասթըրի նա-
հանգին մէջ: Յանձնախումբը
ամէն ջանք ի գործ կը դնէ
այժմ դեռ 250 ոստիկան ալ կար-
գել որ ամբողջանայ կանխառ
որոշուած թիւը:

«Գէօրգիւլի գաւառին մէջ նախ-
նական վարժարաններ հաստա-
տուեցան պուլկարներու համար,
իւրաքանչիւր չորս գիւղերու մէջ
մէկ վարժարան:

«Թուրք ուսուցիչներ անուան-
ուեցան յոյն և պուլկար վար-
ժարանացմէջ Գրիստոնեայ տղաք-
ներ՝ որ կը փափաքին իտալիէ
թրքական վարժարանները մըտ-
նել, ընդունուած են իւր գիւղե-
թիւի և թոշակաւոր:

«Երեք նահանգներու հասոյթին
5 0/0 ը ամէն շաբթու կանոնա-
ւորապէս ձեռնհաս իշխանու-
թեանց կողմէ յանձնուած է երկ-
րագործական գրամատուներուն
«200 քիլօմէթրօ ճամբայ շին-
ուած է: Սկսուած է երկու մեծ
կառուարչներու շինութեան, որոնց
իւրաքանչիւրը պիտի արժէ հին-
գէն 6000 օսմ: լիրա:

«Նոյնպէս 50 հաւո ուրիշ նուազ կարեւոր կամուրջներ շինուելու վրայ են: Բոլոր պաշտօնեաները՝ որոնք զեղծումի կամ անկարողութեան համար ամբաստանուած են, պաշտօնանկ եղան կամ դատարանի յանձնուեցան: Անոնց թիւը սա վերջի ինն ամիսներու մէջ հազարի կը հասնի: Ոստիկանութեան մէջ ընդունուեցան այնպիսի քրիստոնեաներ իսկ որոնք թուրքերէն չեն գիտեր:»

«Երեք նահանգներու զանազան գեղերէն քրիստոնեայ անտառապահներ ընտրուած են: Մանասթըրի նահանգին գեղերուն և իսլամ ու քրիստոնեայ անտառապահներուն թիւերը պարունակող ցուցակներ յանձնուեցան բոլոր օտար հիւպատոսարաններուն:»

«Դատեր բացուած են ամէն տեղեր այն բոլոր բնակիչներու գէմ որոնք խռովութիւններ յարուցած և անկարողութիւններու մէջ գտնուած են:»

«Տասնորդները խմբովին միւլթէղիներու տալու դրութիւնը շնչուած է: Աճուրթի դրուած են:»

Ռուսիոյ և Աւստրիոյ դեսպանները երէկ կրկնեցին իրենց դիմումները Պալատը՝ Դուան պատանդին վերաբերմամբ որ տրուած պէտք էր ըլլար Աւստրո-Ռուս նօթային առթիւ: Այս դիմումներուն հետեւանք մեծ վէճերը Ֆէրիտ փաշան, նոյն օրը ժամը 6 ին կէսօրէ յետոյ գնաց Աւստրո-Հունգարիոյ և Ռուսիոյ դեսպանատուները և անոնց երկդիմի պատասխան մը տուաւ: Երբ, ի մէջ այլոց, առաջարկեց հակակշիւր (գօնթթօլ) հիւպատոսներու կողմէ կատարել փոխանակ երկու մուսավիշներու: Միեւնոյն ատեն երկու դեսպաններու տրամադրութիւնները հասկնալ ուղեց թայց ասոնք յայտարարեցին բացարձակ երպով թէ պատասխանը անգոհացուցիչ է:

Հետեւաբար նախարարաց խորհուրդը իր այսօրուան նիստին մէջ պէտքէ վերջնական որոշում տալ այդ խնդրոյ մասին:

Կը հաւատեն թէ Գերմանիոյ դեսպանը Սուլթանին մօտ նոր դիմումներ ըրածէ Աւստրո-Ռուս ծրագիրը ընդունելու մասին:

Ինչ որ կը վերաբերի Սուլթանի բաղձանքին թէ հակակշիւր ի գործ դրուի հիւպատոսներու կողմէ, գերման դեսպանը զանի համոզած է թէ իրական տարբերութիւն մը չկայ անոնց եւ իր ըսածին մէջ:

Էնտէք. Ռոնալէն

ՌՈՒՍ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ

Լէոքսէնէ թարգմանարար կարտապետներ հետեւեալ նամակը զոր Ռուսիոյ ներքին գործոց նախարարը ուղղած է կրթական նախարարին: Մեր ընթերցողները պաշտօնական ու գաղտնի միտալու սահմանուած այդ նամակէն պիտի տեսնեն թէ ռուսական միապետութեան հսկայ չէնքը քանդուելու մօտ է, որուն ճարճատուրը կը լսուի ամէն օր ամբողջ Ռուսիոյ մէջ: Կառավարութեան մտահոգութիւնը օրքան շօր կաւելնայ ու ոստիկանութիւնը կը ստիպուի հաւածել մինչեւ իսկ դպրոցական պատանիները որոնք Ձարկովի գէմ կուտելու նպատակաւ կազմակերպուած թիւները ըրած ու շարժումներ սկսած են:

Ահա նախարար Բլէվէի գաղտնի նամակը ուղղուած կրթական նախարար Կ. Չէնկէրի

Թիւ 1865 25 Մայիս 1903

Ձեռք Աւետեւեան

Բեդէրսպուրիի Կ. Նոր Լիւնէն փելիստայական գաղտնիացի նախկին աշակերտ էվէլ Ռոսէնօնի ընակարանէն ոստիկանութեան այցելութեան միջոցին թուղթերուն մէջ գտնուած էր երկրորդ թիւը Դեպի Լոյս հանդէսին, որ «Բեդէրսպուրիի Լիւնէնքու կազմակերպութեան Գործադիր Յանձնախումբ»ին կէղմէ հրատարակուած է և տպագրուած Միլիօրաֆուլ: Այս հանդէսը կը պարունակէ շատ յօդուածներ որոնք կը խօսին Կայսրութեան երկրորդական վարժարաններու աշակերտաց ախուր կացութեան վրայ և հարստահարութիւններու մասին որոնց կենդանութիւնն այդ աշակերտները երբ կը ձգտեն գէպի աւելի կատարելալ և աւելի անկախ գաստիսկութիւն և ժողով ազատ զարգացում ստանալու: Այդ բանուած թիւին նախադրուածը զանազան եղանակներ ցոյց տալով ուսանողներուն բողոքելու և շարժումներ ընելու իրաց վիճակին դէմ, կը մատնանշէ զոյուլթիւնը հակակառավարական կարեւոր կազմակերպութիւններու, որք են 1) խմբովին Լիւնէնքուներու Միութիւնը, 2) Գիւլի Լիւնէնքուներու խումբներուն և ընդհանուր միութեան չըջանակներու կեդրոնատեղին: 3) Հառաւային Ռուսիոյ Լիւնէնքուներու խումբը, 4) Երկրորդական վարժարաններու աշակերտաց Ս. Բէդէրսպուրիէան Կազմակերպութիւնը: Այս չորս մեծ կազմակերպութիւններէն զատ կան Մոսկուա, Նիժնի-Նովորոսով, Բաքով Միսք, Իսթուլ, Ժարոսլավի, Նովորոսով, Բէնսա, Օռէլ, Թուլա, Ռոսթով, Սեբերասով, Մոսկով, Չիթա, Պիոլնսկ, Վիլնա, Վարսովի, Սիւմպրի, Սամառ, Գալուկա, Վիթէպոք և Էկատէրինսկայի, ուրիշ հասե կարեւոր չըջանակներ և խումբեր որոնք սերտ յարաբերութեան մէջ գտնուելով Ս. Բէդէրսպուրիի Կազմակերպութեան հետ, կը ձգտին բոլոր Ռուսիոյ երկրորդական կրթական հաստատութիւններու աշակերտաց ընդհանուր միութիւն մը հաստատել: Ըստ յօդուածի հեղինակին կայսրութեան կեդրոնական մասին մէկ քաղաքին մէջ Լիւնէնքուները «Կոնքի կազմակերպութիւն» մը հաստատած են,

ասոր պաշտօն տալով գործնական կոնքի մը ձեռնարկել «ընդ գէմ այն զգուշելի դրութեան որ այժմ գոյութիւն ունի երկրորդական կրթական հաստատութեան մէջ:» Ռուսիոյ հարաւային կողմը լիւնէնքու ուսանողները իրենց ծրագրին ներմուծել են ընկերակարութեան ուսումը և բարձրագոյն կրթութեան ուսումը: Երբ մը ուրիշ խումբեր Կայսրութեան զանազան նահանգներուն մէջ սկսած են հրատարակել այն տեսակ հանդէսներ, ինչպէս Նիսքի «Պատանի խումբ», Նիժնի-Նովորոսով «Գիւլի Յանձնախումբ», Էկատէրինսկայ «Պատանի»:

Այս բոլոր կազմակերպութիւնները կը ձգտին երկրորդական վարժարաններու բոլոր երիտասարդութեան, համար մէկ կեդրոնական օրկան մը ըստեղծել: Ձեր բարձրութեան ուշադրութեանը ընծայած յօդուածիս վերջին մասը կը հաստատէ որ շատ անգամներ մի Լիւնէնքուներ համաժողով գումարած են Բաքով, Մոսկուայի, Ռոսթովի, Վարչապետի, Գիւլի մէջ իրենց ապագայ գործունէութեան ծրագիրը մշակելու համար:

Վերոգրեալ յատկ տեղեկութիւնները Ձեր բարձրութեան հաղորդելով, կը խնդրեմ լաւհաճեցէք ընդունիլ իմ խորին յարգանաց և անձնօրէնութեան հաւատարմութիւնը:

Ստորագրեալ

Վ. Բլէվէ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Փ. ՊՈԼԻՍ, 9 Նոյեմբ. 1903

Ի նպատակ Մակեդոնացի գաղմականներուն տրուած անալիս երկրորդէն յետոյ, Պատ. Հակ. Եարտման, Հայկազեան Կրթարարին համակրելի անօրէնը, գովելի ու շատ գեղեցիկ գաղափարը ունեցած էր միեւնոյն նպատակին համար երկրորդ երկրորդ մը կազմակերպել իր վարժարանին սրահին մէջ, «Ամսոյ 7 ին, ուրբաթ գիշեր, «Հայկազեան» կրթարարին բաւական ընդարձակ սրահը լեցուն էր երկուսուրազմութեամբ մը: Ներկայիւններուն մէջ կը նշմարուէին նաեւ բաւական թուով պուլկար ընտանիքներ:

Երկրորդ իր ամբողջութեան մէջ կարելի է ըսել կատարելապէս յաջող, հաճելի ու հրահանգիչ էր միանգամայն, ու հանդիսականները մեկնեցան անկէ ոչ միայն սրտի ազնիւ պարտականութիւն մը կատարած ըլլալու ներքին պոնտականութեամբ, այլ նաեւ զուարթ ու գեղեցիկ ժամանց մը անցնելով:

Երկրորդ բաժնուած էր երկու մասի. աւալին մասին մէջ վարժարանին աշակերտները ներկայացուցին շարք մը կենդանի պատկերներ, որոնք պատրաստուած էին վարժարանին Ձուրցիւրացի վարժուհի Միս Ֆրէյլիի կողմէ: Մասնաւորապէս կը շնչոտի այս կէտը, որովհետեւ բոլոր կենդանի պատկերները պատրաստուած էին օրուան նիւթին հետ բոլորովին անշուշտ չունեցող ըմբռնով: Թո՛ղ ներքին ինքի այս դիտողութիւնը ընել, որովհետեւ կարելի էր Հայաստանի ու Մակեդոնիոյ տառապանքը ու ձգտումները խորհրդանշող պատկերներ ներկայացնել, որոնք անշուշտ աւելի պիտի յուզէին մեր սրտերը ու պիտի համապատասխանէին օրուան նիւթին:

Այս ամիսուն հիւս անկայն, Միս Ֆրէյլիի ջանքաւոր հնորհաւորելի է իր պատրաստած այս կենդանի պատկերներուն համար, որոնց մէջ յատկապէս կը տեսնուէր ճաշակի ազնուութիւնը ու գեղարուեստական չրբութիւնը:

Ամեն կենդանի պատկերէն վերջ միս Ֆրէյլիի ու Օր. Կրասնոստրովա դաշնակի վրայ կը նուազէին եւրոպական ընտիր կտորներ, Օր. Կրասնոստրովա, որ օտարուած է միանգամայն գեղեցիկ ձայնով մը, մեղի երգեց դաշնակի վրայ ֆրանսերէն ու անգլիերէն երկու գեղեցիկ կտորներ ու պուլկարէն երգ մը օսկանօք վրայ: յետոյ սկսաւ յուզիչ տրամախօսութիւն մը, զոր ներկայացուցին վարժարանին աշակերտակները ու աշակերտները: Մակեդոնիոյ ու Հայաստանի ներկայ դառն ու աղետալ վիճակը անգամ մըն ալ պատկերացաւ մեր աչքին առջիւ ու ներկայիցը զգացին վրէժին նուիրական սարսուռը, որ ուսեցուց իրենց կուրծքերը, երբ Օր. Թէնստֆ Սասարճեան, որ կը ներկայացնէր Մայր Հայաստանը, յուզիչ միանգամայնութեան մը մէջ, երգեց իր տառապանքը ու Սուրբ Աստուծոյ խնայող Լիւնէնքու ընտելացնող թշնամիին գէմ: Օր. Էլիզա Գուրուեան, որ Մակեդոնիան կը խորհրդանշէր, զգայուն ու գեղեցիկ առողջանութեամբ մը պատկերացուց ներկայ կուռղ Մակեդոնիան ու իր գաժան սրահամարանը նետեց քաղաքակրթութեան պատուիրակին երեսին ի վար որ ուրիշ բան չէր բերէ իրեն, եթէ ոչ պղատոնական համակրութեան մը անօգուտ հաւաստիքը:

Աշակերտներէն պ. Սրապեան կը ներկայացնէր թուրք շահամու ու կաշառակիր պաշտօնեայի գերագոյն տիպարը: Կատարեալ յաջողութեամբ պատկերացուց թուրք պաշտօնեաներուն ճշգրիտ հոգեբանութիւնը, որոնց բերանը կայրի, երբ կարտասանեն «Կօթա» բառը, և որոնք սակայն հիւսնալի տիրութեամբ կը համաձայնին օգնել նոյն այդ «քոմիլթա»ներուն ձեռնարկներուն ի տես կարմրուկ ու հրաշագործ ոսկիներուն:

Տրամախօսութիւնը կը վերջանայ Մայր Հայաստանի ու Մակեդոնիոյ երկայնական զինակցութեան ուխտովը, որմէ վերջը Նալպանդեանի «Ազատն Ատուտու» անգամ մըն ալ կը խոսէ մեր սրտերը ու աղատութեան ծարաւովը կերէ մեզ:

Տրամախօսութեան աւարտումէն վերջ Պատ. Եարտման հրաւիրեց հանդիսականները, որպէսզի իրենց տպաւորութիւնները յայտնեն: Բաւթօր Սըշանով, իր զգացած տպաւորութիւնը յայտնեց պուլկարէն լեզուով ու աւելցուց, թէ բոլոր գիւղացիներուն ու բարձրութիւններուն մէջէն երբեք ազգիւր պիտի գտնեն իրենց ազատութիւնը: Յետոյ բո՛ւ թարգմանաւ վարժարանին նորեկ դասատուն, պ. Գ. Գալեան, ու կարճ ատենախօսութեամբ մը մեզ շնորհ զիմ սրբելու ու բողոքելու անհրաժեշտութիւնը: Ժամանակ մը, ըսաւ ան, երկպառակութեամբ խանդ ու հուսով կը ներշնչէին Նալպանդեան քաջարի գործերուն, իսկ այսօր, հո՛ն, Ռուսիոյ մէջ, ուր բռնակալութեան երկաթէ ճիւղները կը ծանրանան ազգային գոյութեան վրայ, Հայ եկեղեցիներուն նուիրական գործերը կը ծաղկաւայրեն ու փառաւոր անձնութեանները կը մղեն հայ կարիճները:

Էն վերջը խօսեցաւ պատ. Տնօթնոր որ ի վեր հանեց ընդհանուր գեղեցիկութիւնը ու անոր տիրական անհրաժեշտութիւնը, ու հրապարակեց շնորհով մը գոռաց, թէ առապաղ ժողովուրդը կարեն բողոքի ու զոյրթի աղաղակներէն աւելի սուր ու նուիրական բան մը չկայ աշխարհի մէջ, և թէ անոնք, այդ աղաղակները, հրեշտակներուն ձայներէն ալ աւելի սուրբ են: Հոս բուռն ծաղկաւարկութիւններով ող-

Ջուշուակցաւ յարգելի ատենախօսար ուսանողաց իւր խօսքը հաւատքի ու սրբապնդումի խօսքերով :

Երեկոթի վերջացաւ ու մեկնեցանք անկէ շատ լաւ ապաւորութիւններու տակ : Պատ. Եւրամիան կրկնապէս շնորհակտութիւն է իր այս գեղեցիկ ու օգտակար ձեռնարկին համար ու նախ. այն առողջ ազգային կրթութեան համար որ կուտայ իր աշակերտներուն :

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

— Գ —

Հին Հնչակեաներու «Կեդրոնական Օրգան» ը պաշտօնագէտ Վեր. Հնչակեան հատուածին կը վերադրէ Տ. Նազարեանի վրայ տեղի ունեցած յարձակումը ու Սաղունիի եւ Երկու Հին Հնչակեան պատգամաւորներու լծնորայի մէջ սպաննութիւնները : Մենք կուգէինք տեսնել այս ծանր անբախտութիւնը կիսով չափ հաստատող փաստեր ալ այդ հատուածին հրատարակած երեք թերթերէն միոյն մէջ. այդ պարագային այս անգամ ալ մենք չպիտի վարանէինք մեր զգուշացող ու պարտաւանդը հրապարակաւ յայտնելու Վերապահաւ հատուածին դէմ, ինչպէս ըրինք Հին Հնչակեան կեդրոնին դէմ Շահէնի եւ Զիթճեանի սպաննութեանց առթիւ, երբ Հին մասնաճիւղերու պաշտօնական նամակներ, չըջարեալականներ տեսնաք եւ հին Հնչակեան գործընկերու, Պ. Գալֆանանի, Ռ. Կարապետեանի եւ Սապահ-Գիւլեանի խոստովանութիւնները լսեցինք :

Հետեւեալ, որչափ որ գտնէ կիսով չափ փաստեր ու վկայութիւններ չկան Վերապահաւորներու ոճրագործութիւնը ապացուցանող եւ միայն վերժառուութեան ներգործութեամբ մը այդ ամբաստանութիւնները կը լլան, մենք վերապահութեամբ պիտի վերաբերուինք Հին Հնչակեաններու ըսած ու գրածներուն : Եւ կը ցաւինք որ իրենք առանց հարկ եղած փաստերուն, բոլոր եւրոպական եւ ամերիկեան մամուլը

իրար անցուցին ներխաչողական տեղեկութիւններ հաղորդելով անոնց թէ Լծնորայի սպաննութիւնները հայ յեղափոխական երկու հատուածներու իրարու դէմ ունեցած թշնամութեանց արդիւնք են : Մենք կը կարծենք որ այս տեսակ ամբաստանութիւն մը Հայ ազգի ազատագրումին նուիրուած բոլոր յեղափ. կազմակերպութիւններուն անպատուաբեր էր եւ նոյն իսկ բոլոր հայերու ազատութեան արժանի ժողովուրդ մը ըլլալը կտակածի տակ կը ձգէր յայտ քաղաքակրթութ աշխարհի :

Հայերու համար այս բարոյական անկումը պէտք է բուժել ջանալ զգաստութեամբ, ոչ թէ նենգաւոր յայտարարութիւններով, որոնք իրենց ներք ծածկութիւն տակ իսկ ցոյց կուտան թէ կըրպարտապանութեան չըջանք դեռ չէ գոցուած, աւաղ...

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ա Ռ

Պ. ԳԱԼՖԱՆԱՆ

— Գ —

Իրաւունքի պատասխանատու ծանօթ հայաւեր Տ. Ներթալ Տրակուլէվի դէմ ձեր բացած դատին անտեղի եւ անիմաստ լինելը ցոյց տրուած էր : Բուն ամբաստանողը ձգելով, խնդրոյն բոլորովին անտեղեակ օտար հայաւերի մը դէմ դատ բանալու եւ այդ դատը պիտի չարունակեմ ըսելու ձեր յամառութիւնը ծիծաղ կը շարժէ :

Լաւ, չարունակեցէ՛ք ձեր այդ դատը. բայց բուն ամբաստանութեան համար ինչ ըսելիք ունիք : Եթէ հարելու անմեղներ ալ դատապարտել տալ յաջողիք, տեղական օրէնքին իրաւաբանական եւ խզի տեսակետով քննադատելի մէկ յոշուածէն օգտուելով, կրկին հայ հասարակութեան առջեւ դուք եւ Սապահ-Գիւլեան (Հնչակեան նախկին կեդրոնը) դէմ դիմաց կը մնաք այն ծանր ամբաստանութիւնը ձեր ձեռքին կախուած. եւ որչափ ամբաստանող մարմինը կամ անձը երբ ցած զրպարտիչ մը հրապարակաւ չորակէք, այդ ամբաստանութեան ճշմարտութեան

թիւնը ձեր լուրջութեամբ հաստատուած պիտի ըլլայ : Եւ ալ աւելին կայ. Հայ ժողովուրդը կըսէ ու միշտ պիտի ըսէ, «տեսէ՛ք զերբար գող աւազակ ցոյց տուող մարդիկներն են որ յեղափ. կուտակեցութեան մը գործիչներ կը ներկայանան կրկին ձեռք ձեռքի տուած » :

Հետեւեալ թէ Զեր եւ թէ Հին Հնչակեան հատուածին պատիւը փրկելու համար ուրիշ միջոց չունինք՝ բացի Զեզ անբաստանող պաշտօնական նամակին բուն հեղինակ Սահպահ-Գիւլեանի օձիքէն բռնելով իր ցած զրպարտիչ մը հրապարակաւ խայտառակելէ : Այս ամենակարգ եւ փրկարար ճամբան բռնել չէք ուզեր կ'ամ անոր համար որ զձեզ արդարացիներու անկարող էք եւ կամ կը չ'ախնայք որ Սապահ-Գիւլը եւ նախկին Հին Հնչակեան կեդրոնը Զրպարտիչ ցոյց տալով Զեր պատկառանք այդ հատուածին բոլոր ըսածները եւ գրածները Զրպարտիչներ նկատելու իրաւունք կուտար ժողովուրդին. սա կը հասկնամ ինչո՞ք երկուքէն մէկը, կամ Գորդոնի կամ Զրպարտիչին, անխուսափելիօրէն ընդունել պէտք է : Ուրիշ ճամբայ չկայ, վեսէ՛լա՛մ :

ՀՐԴԵՆԻ ԿԱՄ ԳՈՂՈՒԹԻՒՆ

— Գ —

Անցեալ օր հեռագիրները հաղորդած էին թէ Բեթերսպուրկէ Մօսկուա գացող երկաթուղիի կառավարման թղթատար վանքերը հրդեհուած է ու բաւական քանակութեամբ կապոցներ ու ծրարներ աչրուած : Կասկած կար թէ այդ հրդեհը գողերու գործ ըլլար : Բեթերսպուրկի մեծ օրաթերթը այդ գէպը առթիւ հետեւեալ տողերը կը գրէ :

Յանկանում են տեղեկանալ, թէ վազոնի պարունակութիւնը ազատուած է թէ ոչ : Կարող է պատահել ազատուած լինի, կարող է եւ հակառակը պատահել. հեռագրի հաղորդածի հա

մաձայն, վազոնը աչրուել է . . .

Սակայն, հեռագրերու հիմանաւ, թէ իսկապէս ինչ բաներ են աչրուել, Բայց, բացի պաշտօնական հեռագրից, ոչինչ յայտնի չէ. . . Վազոնում, ասուում է, եղեր են 7 միլիոնի թուղթ գրամ եւ երկու հարիւր հազարի չափ ոսկէ գրամ :

Խնդիրը երթալով տարբեր կերպարանք է ուսանում եւ ծնունդ են առնում նորանոր հարցեր. որոնցով հասարակութիւնը իրաւունք ունի հետաքրք ունելու. . . Ինչ կարող է պատահած լինել. յիշաւի, պատահական հրդեհ պէտք է համարել, այդ թէ՛ խիստ ճարպիկ ու հակառակ յափըռտակութիւն : Եթէ միլիոնը մի այնպիսի գումար է, որի համար կարելի էր նոյն իսկ արտասանմանց յատուկ արշաւախուժում ուղարկել, ոչ պակաս կազմակերպուած, քան Նանսինը. . .

Եթէ, յիշաւի, յափշտակութիւն է, այդ գէպում, երկու օրը բաւական մեծ ժամանակ է, որ հանգիստ անցնելով, մեծապատիւ գողերը կատարեալ հնարաւորութիւն կարող էին ունենալ իրենց գործերը կարգի գնել եւ հեռանալ, ձեռք բերածը հանդուստութեան մէջ վայելելու համար :

ԲԱՌԱՐԱՆ

ՊՈՒԼԿԱՐԵՆ -- ՀԱՅԵՐԵՆ -- ՏԱՃԿԵՐԷՆ

ՅՕՐԻՆԵՑ

ԱՍՏՏՈՒՐ ՄԿԻՏԻՉԵԱՆ

Հրատարակուած են 24 պրակները (մօտ 400 էտեա) եւ մնացեալ 8 կամ աւելի պրակներն ալ մինչեւ յառաջիկայ յունուար կաւարտին : Բաշակորդագրութիւն կը նշուի մինչեւ դեկտ. 31 : Թէ աժան եւ թէ մաքուր կազմուած ստանալ ուղղութեամբ փութալու են մօտակցիլ բաժանորդագրութեան որ 5 փրակ է :

Դիմել Մասնախմբի գանձապետին Տ. Մասթոս Թախթեան — Սօֆիա

ԱՐՄԻՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՁԻԻԼՑԻ...

Գ.

Բարեկամս եղբերգական ու աղերակ նամակը խորունկ ցաւ մը աղբից սրտիս ու որոշեցի անմիջապէս պատասխանել :

Պ. . . 1901 փետրուար 3

«Բարեկամս, Նամակդ արցունքով մը կտրեցի ու չը դիտեմ ինչ գրելու. . . չը դիտեմ ինչ բացատրութիւններ տալու :

«Անձանօթ մը, տարաբաղդ ծերունի մը. ինչպէս նաեւ մուրացկան մը երեւցու ինծի, բայց՝ անսրտին ամենէն մօտիկը եւ միանգամայն խորհրդաւոր անձ մը կը դառնան. . .

«Այն աղետաւոր վտանգներէ ետքը, չափէն աւելի ծանր էր քեզի համար տեղւոյս քանի մը հայ անուն կրող հայրենասիրութեան գունդերէն վտանգ չկար. բայց հոգեկան արիւթ լինելը քու առաջնորդը ըլլալով, վնասիլ չունէիր :

«Աստուած քու հետք ըլլայ. . .

«Անհամբեր կը սպասեմ երկրորդ նամակդ զոր չեմ յուսար թէ կուշացունես :

«Կաղօթեմ Աստուծոյ որ յաջողութիւն տայ բոլոր նպատակիդ :

«Ընդունէ՛ որդեկական անկեղծ յարգանքներս !

ԱՐՄԻՆ

Ես ալ յանձնարարեալ ըրի նամակս : Գտնի մը օրէն ետքը հետեւեալ տիւրը գրութիւնը ստացայ :

Վ.Ա.Ռ.Ա., 1901 փետր. 13

«Միւրեկ պարոն, «Խոստումն կատարելու դարձեալ ուշացայ : Բայց կը ներես, որովհետեւ Ռուսոնքէն Վառնա եկած եմ եւ մտերիմ մէկը չեմ կրցած գտնել որ պատմութիւնս այնպէս պատկերացունէ քեզի, ինչպէս որ կը փափաքեմ :

Ուրախ եմ յայտնելու թէ բարեկամի մը շնորհիւ ծանօթացայ ազնիւ պարոնի մը, որ յանձն առաւ փափաքս կատարել :

«Այդ, կուգէի հասցնելու թէ ինչ ըրի Ռուսոնք եւ թէ ինչ կրցայ ձեռք բերել :

«Ո՛հ, ընդունայն աշխատեցայ. . . Բեշատ պէյ կոչուած թուրք հազարապետին քով հայ աղջիկ մը չըկար : Ասիկա ամեն գաղտնի միջոցներով հասկցայ Ան ատեն ուղղակի այդ մարդուն ապարանքը մտայ ու իրեն ներկայացայ :

«Բեշատ պէյ հազիւ երեսուն անցած, բարձրահասակ, կապոյտ աչքերով, ձուլած գէպով, լուրջ կերպարանքով, ծանրաբարոյ ու յաղթ կազմուածքով մարդ մըն էր : Սիրով ընդունեց զիս ու հարցուց :

« — Ինչ կուգէք :

« — Կը խնդրէի որ յայտնէք ինծի անանկ ճշմարտութիւն մը, որուն մէջ ձեր խիղճը պատկերանայ, միմիջեցի ցաւատանջ ձայնով մը :

« — Ձեմ հասկնար. . . բացայայտ խօսեցէ՛ք. ընդհատեց Բեշատ պէյ :

« — Ես Հայաստանցի մըն եմ, պէ՛յս. յարեցի խորին դառնութեամբ մը. ձեր մեծութիւնը չատ

աղէկ դիտէ թէ ինչ վտանգներու դիմադրելով մինչեւ հոս եկած եմ. . . Միեւնոյն ատեն՝ կարող էք զգալ թէ ինչ արցունքներ թափելով սեմբէզ ներս ոտքս կը գնեմ ու կը համարձակեմ սիրտս բանալ : Ո՛հ, պէ՛յս, իմացած եմ որ Վանի կոտորածին դուք զինուորական հրամանատար մըն էիք՝ երգիկայէն իրկուած : այնպէ՛ս է :

« — Ծ՛մարիտ է :

« — Կը պաղտի՞մ, բարե՛ պէյս, ըսէ՛ք ինծի թէ ինչ ճակատադրի մը դատապարտուեցաւ այն առեւանգուած հայ աղջիկը զոր դուք հրէջ չէիք մը ձեռքէն առած էիք :

«Հազարապետը պահ մը վրաս դարձուց իր մեծ ու խորաթափանց աչքերու նայուածքը. յետոյ ձեռքը լայն ու պատկառելի ճակտին տանելով, ըսաւ.

« — Այդ հայ աղջիկը քու ինչդ է :

« — Ա՛խ, պէ՛յս, հարազատ դաւակն է, պատասխանեցի զոգրեղալով :

« — Կը ցաւեմ որ սիրուր լուր մը տալու վիճակին մէջ կը գնէք զիս, բարեկամս : Իրա՛ւ է, Վանի կոտորածէն վերադարձող Շէյխի մը ձեռքէն հայ աղջիկ մը առա՛ն էի : Բայց երբ Կ. Պոլիս փոխադրուեցայ, չը կրցայ սիրտ ընել զանի հետս բերելու համար, որովհետեւ ամեն օր կուլար, կողբար եւ հալումայ կը լլար աչքիս առջեւ : Ահա՛ այդ պատճառաւ, Կ. Պոլիսէն մեկնած պահուս, դադարեցար հայ քահանայ մը կանչեցի սուէնս եւ անոր յայտնեցի եղիւթութիւնը : Բայց այդ քահանայ կոչուած հրէջը խաբեց զիս թէ մէկ օր ետքը պիտի գար, սպասեցի՛, զրեթէ չարաթի մը չափ սպասեցի. ո՛չ եկող կար եւ ո՛չ ալ գացող : Եւ ատեն աղջկանդ հարցուցի :

(Շարունակելի)

